



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Ջորավար Անդրանիկի 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » հուլիսի 2014 թվականի N 34-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Մանես» բարեգործական հիմնադրամի և Ալավերդու քաղաքապետարանի միջև կնքված N 14/1 Նվիրատվության պայմանագրիը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

Ալավերդի համայնքի 2014 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել փոփոխություններ.

2014 թվականի բյուջեի եկամտային մասում օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գումարն ավելացնել 3900.0 հազ. դրամով (հ/հ 900265121203):

2014 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի այլ մշակութային կազմակերպությունների ամանորի միջոցառումների ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերն ավելացնել 200.0 հազ. դրամով (բաժին 08, խումբ 2, դաս 4, ծրագիր 51, հ/հ 900262121123, հոդված 4239), և հատուկ նպատակային այլ նյութերի ծախսերն ավելացնել 800.0 հազ. դրամով (հոդված 4269), «Մետալուրգ» ֆուտբոլի ակումբի ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար նախատեսել ծախս 100.0 հազ. դրամով (հոդված 4239), ֆանֆուտբոլ միջոցառման ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար նախատեսել ծախս 500.0 հազ. դրամով (հոդված 4239), քույր քաղաքների հետ մշակութային կապերի ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար նախատեսել ծախս 500.0 հազ. դրամով (հոդված 4239): Նույն բնագավառի հանգիստ, մշակույթ, կրոն այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերն ավելացնել 50.0 հազ. դրամով (բաժին 08, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121362, հոդված 4239):

Կրթության բնագավառի «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի ընթացիկ դրամաշնորհների համար նախատեսված ծախսերն ավելացնել 400.0 հազ. դրամով (բաժին 09, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121289, հոդված 4637):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցչական ծախսերն ավելացնել 350.0 հազ. դրամով (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038, հողված 4237):

Սոցիալական պաշտպանություն բնագավառի սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների (այլ դասերին չպատկանող) ծախսերն ավելացնել 1000.0 հազ. դրամով (բաժին 10, խումբ 9, դաս 2, ծրագիր 51, հ/հ 900262121198, հողված 4819, «Առաքելություն Հայաստան» ԲՀ):

Որոշումն ընդունվել է.

ԿՈՂՄ (10)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱԿ (0)

Ջալալյան Զարեհ *[Signature]*

Զեփյան Զարգան *[Signature]*

Օսրիջև Մարիել *[Signature]*

Վ. Բեյշև Զ. Բեյշև *[Signature]*

Ջալալյան Արմեն *[Signature]*

Արև Ջալալյան *[Signature]*

Արմեն Զաքարյան *[Signature]*

Զառա Ջալալյան *[Signature]*

Արմեն Զաքարյան *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.Ս. ԿԱՐՈՍՅԱՆ